ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 149 –Ա

ՏԱՐԵՄՈՒՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրու զինկոմիսարիատի ներկայացրած ցուցակները (քաղաքապետարանում մուտքագրված 2014 թվականի նոյեմբերի 5-ին N 11131 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես ծանր պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) Արցախյան պատերազմում (1991-1994 թվականներ) զոհված՝ թվով 105 (մեկ հարյուր հինգ) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2100 000 (երկու միլիոն մեկ հարյուր հազար)՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Զոհված (մահացած)՝ թվով 159 (մեկ հարյուր հիսունինը) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3 180 000 (երեք միլիոն հարյուր ութսուն հազար)՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ՝ թվով 19 (տասնինը) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 285 000 (երկու հարյուր ութսունհինգ հազար)՝ համաձայն N 3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ թվով 239 (երկու հարյուր երեսունինը) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2390 000 (երկու միլիոն երեսունինը հազար)՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից՝ թվով 68 (վաթսունունութ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 1 020 000 (մեկ միլիոն քսան հազար)՝ համաձայն N 5 հավելվածի,

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից՝ թվով 37 (երեսունյոթ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 555 000 (հինգ հարյուր հիսունհինգ հազար)՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան	_____	
Գ. Ադամյան	_____	
Ա. Բաղեյան	_____	

Ա. Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.